

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 10/4

15 մարտի 2016 թ.

Քննարկվեց Ա/Ձ էլիզա Թոսունյանի 12.02.2016թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 18.01.2016թ-ի թիվ 6116670 ակտի դեմ:

Ա/Ձ էլիզա Թոսունյանի գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ՖՆ Կենտրոնի հարկային տեսչության պետի 24.11.2015թ. թիվ 6116670 հանձնարարագրի համաձայն էլիզա Թոսունյան Ա/Ձ-ի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Այնուհետև 25.12.2015թ. կազմվել է թիվ 6116670 ակտի նախագիծը, իսկ 18.01.2016թ.՝ թիվ 6116670 ակտը:

Ըստ ակտի, ֆիզիկական անձ Գայանե Կազարյանի կողմից 12.12.2015թ. ժամը 11:50-ի սահմաններում ք.Երևան, Մայիսյան 22/2 հասցեում գտնվող խանութից կատարվեց գնում 970 դրամի չափով՝ 1 հատ թթվասեր 550 դրամ արժեքով և 1 հատ կաթնաշոռ 420 դրամ արժեքով, որի դիմաց ՀԴՄ կտրոն չտրամադրվեց: Այնուհետև ակտում նշված է, որ ստուգում անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման և միայն դրանից հետո է ՀԴՄ-ից դուրս բերվել Z հաշվետվությունը:

Ա/Ձ էլիզա Թոսունյանը հայտնում է, որ ակտում նշվածը, որ ստուգում անցկացնող հարկային ծառայողների կողմից նախ ներկայացվել են ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման և միայն դրանից հետո են ՀԴՄ-ից դուրս բերվել Z հաշվետվությունը և մնացած գործողությունները, չի համապատասխանում իրականությանը:

Իրականությունը այն է, որ ստուգող անձը, առանց ծառայողական վկայականը և ստուգման հանձնարարագիրը ներկայացնելու, մոտեցել է ՀԴՄ-ին և սկսել է դուրս բերել Z հաշվետվությունը, ինչպես նաև իրականացնել դրան հաջորդող այլ գործողություններ: Այդ ամենում կարելի է համոզվել, դիտելով սույն գրությանը կից ներկայացվող տեսագրությունը:

Ա/Ձ էլիզա Թոսունյանը գտնում է, որ ստուգող անձինք իրենց գործողություններով խախտելով «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները առանց ստուգման հանձնարարագիրը ներկայացնելու փաստացի իրականացրել են հանձնարարագրից բխող ստուգողական գործողություններ՝ ՀԴՄ-ից դուրս են բերվել Z հաշվետվություն, մուտքագրել են գումար և այլն: Ընդ որում հարկ է նշել, որ նշված գործողությունները կատարելուց հետո ևս ստուգման հանձնարարագիրը չի ներկայացվել, այսինքն՝ խանութի աշխատակիցները որևէ կերպ չեն տեղեկացվել ստուգում իրականացվելու մասին:

Հանձնարարագիրը Ա/Ձ էլիզա Թոսունյանին է ուղարկվել փոստով, ընդ որում ոչ թե ստուգման օրը, այլ ստուգումից երկու օր հետո:

Տեսագրությունում հստակ երևում է, որ ստուգմանը մասնակցել են հանձնարարարում նշված երեք հարկային տեսուչներից միայն երկուսը, իսկ ակտում որպես գնորդ հանդես եկած ֆիզիկական անձ Գայանե Կազարյանն ընդհանրապես չի ներկայացվել և չի հայտնել իր կողմից ակտում նշված ապրանքները գնված լինելու մասին: Պետք է նշել նաև, որ ակտի նախագծի էջ 1 - 1 էջում բացակայում է Գայանե Կազարյան ստորագրությունը:

Նշված փաստարկները բավարար են ստուգող անձանց գործողությունները ոչ իրավաչափ համարելու և դրա արդյունքում կազմված ակտը անվավեր ճանաչելու համար:

Հաշվի առնելով նշված հանգամանքները Ա/Ձ էլիզա Թոսունյանը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ֆինանսների նախարարության Կենտրոնի հարկային տեսչության 18.01.2016թ. թիվ 6116670 ակտը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Կենտրոնի հարկային տեսչության պետի 24.11.2015թ. թիվ 6116670 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ էլիզա Թոսունյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում 18.01.2016թ-ին կազմվել է թիվ 6116670 ակտը (այսուհետ նաև Ակտ):

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ ֆիզիկական անձ Գայանե Կազարյանի կողմից 12.12.2015թ. ժամը 11:50-ի սահմաններում ք.Երևան, Մայիսյան 22/2 հասցեում գտնվող խանութից կատարվել է գնում 970 դրամի չափով՝ 1 հատ թթվասեր 550 դրամ արժեքով և 1 հատ կաթնաշոռ 420 դրամ արժեքով, սակայն վաճառող-գանձապահը գումարը չի մուտքագրվել ՀԴՄ և չի տրամադրվել ՀԴՄ կտրոն: Այնուհետև ակտում նշված է, որ ստուգում անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվել են ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման, որից հետո ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվությունը, չմուտքագրված գումարը մուտքագրվել է ՀԴՄ և կրկին անգամ դուրս է բերվել Z հաշվետվությունը: Ստուգմամբ պարզվել է, որ խախտվել են ՀՀ կառավարության 01.08.2013թ-ի թիվ 846-Ն որոշման հավելված 2-ի 17-րդ և 23-րդ կետերի պահանջները, որի համար կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված տուգանքը՝ գումարով 150.000 դրամ:

Քննարկման ընթացքում Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվեց գանգատին կից ներկայացված տեսագրությունը: Արդյունքում պարզվեց, որ իրոք, ստուգումն իրականացնող անձն առանց ծառայողական վկայականը և ստուգման հանձնարարագիրը ներկայացնելու մոտենում է խանութում տեղադրված ՀԴՄ սարքին և սկսում է կատարել համապատասխան ստուգողական գործողություններ՝ ՀԴՄ-ից դուրս է բերում Z հաշվետվությունը, չմուտքագրված գումարը մուտքագրում է ՀԴՄ և կրկին անգամ դուրս է բերում Z հաշվետվությունը: Այսինքն, ակտում արձանագրվածը, որ ստուգում անցկացնող հարկային ծառայողների կողմից նախ ներկայացվել են ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման, որից հետո միայն կատարվել են վերոգրյալ գործողությունները, չի համապատասխանում իրականությանը:

Քննարկման ընթացքում պարզվեց նաև, որ քննարկվող դեպքում խախտվել են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, որի համաձայն. «Հրամանի կամ հանձնարարագրի երկու օրինակը, ստուգումն սկսելուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ, պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին, բացառությամբ ... հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման, ... իրականացվող ստուգումների»:

Տվյալ դեպքում, հաշվի առնելով հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման առանձնահատկությունը, ստուգման հանձնարարագրի օրինակը

համապատասխան գնումը կատարվելուց հետո պետք է ներկայացվեր (առձեռն կամ փոստով) տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին: Այսինքն, հանձնարարագրի օրինակը պետք է ներկայացվեր համապատասխան ստուգողական գործողություններ (<ԴՄ-ից Z հաշվետվության դուրս բերում, չմուտքագրված գումարը <ԴՄ մուտքագրում և այլն) իրականացնելուց առաջ՝ ստուգման առաջին իսկ օրը:

Ստուգումն իրականացնող պաշտոնատար անձը նշեց, որ ստուգման հանձնարարագրի օրինակը Ա/Ձ էլիզա Թոսունյանին հանձնելու նպատակով հեռախոսով խոսել է վերջինիս հետ: Ա/Ձ էլիզա Թոսունյանը հայտնել է, որ Երևան քաղաքից բացակայելու պատճառով չի կարող ներկայանալ ստուգման վայր: Այդ իսկ պատճառով ստուգման հանձնարարագրի օրինակը Ա/Ձ էլիզա Թոսունյանին ուղարկվել է փոստային ծառայության միջոցով:

Հանձնաժողովը գտնում է, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներից հետևում է, որ քննարկվող դեպքում ստուգման հանձնարարագրի օրինակը Ա/Ձ էլիզա Թոսունյանին պետք է ուղարկվեր ստուգումն իրականացնելու օրը, այն է՝ 12.12.2015թ-ին: Սակայն, սույն գործում առկա ապացույցների ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ ստուգման հանձնարարագրի օրինակը Ա/Ձ էլիզա Թոսունյանին է ուղարկվել ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 14.12.2015թ-ի թիվ 9434/3 գրությամբ, որը փոստին է հանձնվել 14.12.2015թ-ին: Այսինքն, տվյալ դեպքում խախտվել են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները:

Հարկ է նշել նաև, որ քննարկվող հարցի կապակցությամբ իր դիրքորոշումն է հայտնել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ՎԴ/5848/05/08 2011թ. վարչական գործով կայացված որոշմամբ: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ այնուամենայնիվ տնտեսավարող սուբյեկտը մինչ ստուգումը փաստացի սկսելը իրավունք ունի ծանոթանալու ստուգման հանձնարարագրին, ստուգելու համար ստուգում իրականացնող համապատասխան անձի լիազորությունների առկայությունը, իսկ հսկիչ-դրամարկղային մեքենաների ստուգումն սկսվում է ոչ թե հսկիչ գնման պահից, այլ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման, շահագործման կանոնների ստուգման (հսկիչ-դրամարկղային մեքենայի հետ կապված գործողությունների կատարման) պահից, որը ենթադրում է նաև համապատասխան ստուգվող տնտեսավարող սուբյեկտի տեղեկացվածություն ստուգման մասին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 18.01.2016թ-ի թիվ 6116670 ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՄԻԻՐՈՄՅԱՆ

